ԹՌԻՉՔԱՅԻՆ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

GUIDANCE DOCUMENT FOR CAMO CERTIFICATION

ԵՐԵՎԱՆ 2015

ԹՌԻՉՔԱՅԻՆ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ ԵՎ ԹՌԻՉՔԱՅԻՆ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

1. Ընդհանուր

Տվյալ ուղեցույցում նկարագրվում են ՔԱԳՎ կողմից Թռիչքային պիտանիության պահպանման կազմակերպություններին առաջադրվող պահանջները և նրանց սերտիֆիկացման գործընթացը, ինչպես նաև թռիչքային պիտանիության վերահսկումը՝ հիմնված Եվրոհանձնաժողովի №. 1321/2014 որոշման Հավելված I (ՓԱՐՏ-Մ) կանոնակարգի վրա: Լրացուցիչ և ավելի մանրամասն տեղեկատվության համար խորհուրդ է տրվում անդրադառնալ վերոհիշյալ փաստաթղթին:

Սերտիֆիկացման գործընթացի բլոկ-սխեման ներկայացված է Հավելված 13.7-ում:

2. Թռիչքային պիտանիության պահպանման կազմակերպություն

2.1 Պատասխանատվություն թռիչքային պիտանիության պահպանման համար

Շահագործողը կրում է իր կողմից շահագործվող օդանավի թռիչքային պիտանիության պահպանման պատասխանատվությունը և պետք է բացառի օդանավի շահագործումը եթե հետևյալ պայմանները բավարարված չեն.

- Օդանավը թռիչքային պիտանիության վիճակում է,
- Օդանավի սարքավորումները, այդ թվում նաև վթարա-փրկարարային, սարքին են և տեղադրված են նախատեսված ձևով կամ համապատասխան ձևով նշագրված են որպես անսարք, և
- Օդանավը ունի գործող “Թռիչքային պիտանիության սերտիֆիկատ”,
- Օդանավը սպասարկվում է ՔԱԳՎ կողմից հաստատված “Տեխսպասարկման ծրագիր”-ով:

Կոմերցիոն ավիացիայի դեպքում ի լրում վերոհիշյալ պահանջների.

- Շահագործողը պետք է նաև սեռիֆիկացված լինի որպես “Օդանավ շահագործող”,
- Սեռիֆիկացված լինի որպես ՓԱՐՏ-145 տեխսպասարկման կազմակերպություն կամ ունենա պայմանագիր համապատասխան կազմակերպության հետ:

Շահագործողը օդանավերի թռիչքային պիտանիությունը ապահովելու համար իր կազմում պետք է ունենա թռիչքային պիտանության պահպանման ստորաբաժին, որը պետք է անցած լինի սերտիֆիկացում և ընդգրկված լինի նրա “Օդանավ շահագործաղ”-ի սերտիֆիկատում: Շահագործողի կողմից օդանավի թռիչքային պիտանիության երկարաձգման (Airworthiness review authorization) գործառույթի իրականացում չի նախատեսված: Այն իրականացվում է ՔԱԳՎ-ի կողմից:

Յուրաքանչուր շահագործվողի օդանավի համար թռիչքայի պիտանիության կազմակերպությունը պարտավոր է.

- Մշակել և վերահսկել “Տեխսպասարկման ծրագիր” և նրա կատարումը, ներառյալ նաև “Հուսալիության ծրագիր”-ը;
- Ներկայացնել “Տեխսպասարկման ծրագիր”-ը (ՏԾ) և նրա լրացումները ՔԱԳՎ հաստատման;
- Ղեկավարել վերանորոգումների և մոդիֆիկացիաների գործընթացը;
- Ապահովել տեխսպասարկման կատարումը համաձայն ՏԾ-ի և ստանալ օդանավի շահագործման թույլտվությունը (Release to Service) համաձայն ՓԱՐՏ-145-ի պահանջների;
- Ապահովել բոլոր Թռիչքային Պիտնիության Դիրեկտիվների (ԹՊԴ) հաշվառումը և նրանց կատարումը;
- Ապահովել տեխսպասարկման ժամանակ հայտնաբերված կամ հաղորդված անսարքությունների վերացումը հավանություն ստացած տեխսպասարկման կազմակերպությունների կողմից;
- Կորդինացնել պլանավորվող տեխսպասարկումները, ԹՊԴ-ի; կատարումը, սահմանափակ ժամկետ ունեցող մասերի փոխումը և լրաչուցիչ աշխատանքների կատարումը,
- Հետևել փաստաթղթերին և արխիվացնել դրանք,
- Ապահովել օդանավի զանգվածի և ծանրության կենտրոնի փաստագրման համապատասխանությունը իրական վիճակին:

Համաձայն ՓԱՐՏ-Մ-ի M.A.305 և M.A.306 կետերի պահանջների շահագործողը պետք է ապահովի օդանավի թռիչքային պիտանիության բոլոր փաստաթղթերի առկայությունը, լրացումը և պահպանումը.

- Օդանավի գրանցամատյանները (TLB, бортовые журналы),
- Օդանավի, շարժիչների, օժանդակ շարժիչի գրանցամատյանները (LB, формуляры), (հավանություն ստացած համապատասխան համակարգչային ծրագրով վարելու դեպքում՝ առնվազն ամիսը մեկնգամ տվյալները մուտքագրել թղթային գրանցամայտաններ),
- Քարտ-կարգագրերը, տեխսպասարկման ընդացքում կատարված աշխատանքների փաթեթները,
- ԹՊԴ և Բուլլետենների ստատուսները,
- Օդանավի թռիչքաժամերի և սահամափակ ժամկետով բաղադրամասերի ժամերի հաշվառման աղյուսակները,
- և այլն:

Այն դեպքում երբ շահագործողը չունի սերտիֆիկացված տեխսպասարկման կազմակերպություն, նա պետք է կնքի պայմանագիր հավաստագրված ՓԱՐՏ-145 կազմակերպության հետ: Պարբերական և գծային տեխսպասարկուների պայամանգրերը պետք է լինեն ընդունելի ՔԱԳՎ-ի համար:

Սակայն եթե կա անհրաժեշտություն իրականացնելու չպլանավորված աշխատանքներ՝ կարող են կնքվել մեկ անգամյա պայմանագրեր:

2.2 Թռիչքային պիտանության որոշ գործառույթների փոխանցում

Թռիչքային պիտանիության պահպանման որոշ գործառույթներ թույլատրվում է փոխանցել այլ հավանության արժանացած ենթակապալառու կազմակերպությունների: Փոխանցումը արվում է պայմանագրի կնքմամբ, որի դրույթները պետք է լինեն համաձայնեցված ՔԱԳՎ հետ: Գործառույթների փոխանցումը այլ կազմակերպության, անկախ պայամանագրի դրույթներից, չի ազատում շահագործողին

օդանավի թռիչքային պիտանիության համար պատասխանատվություն կրելուց: Ընդունված պահանջների կտարման համար շահագործողը պետք է համոզվի, որ ենթապայամանգրային կազմակերպությունը համապատասխանում է Փարտ-Մ-ի M.A. Ենթաման G-ի պահանջներին:

Օդանավի թռիչքային պիտանիության պահպանման ամբողջական պատասխանատվությունը իր վրա վերապահելու նպատակով շահագործողը պետք է սահմանափակվի միայն հետևյալ գործառույթների փոխանցմամբ.

1. ԹՊԴ վերլուծություն և կատարման պլանավորում;
2. Սերվիս բուլլետենների վերլուծություն;
3. Հուսալիության վերլուծություն;
4. Շարժիչների պարամետրների վերլուծություն;
5. ՏԾ և նրա փոփոխությունների մշակում;
6. Այլ խնդիրներ, որոնք չեն սահմանափակում շահագործողի պատասխանատվությունը և համձայնեցված են ՔԱԳՎ հետ:

Ենթակապառալու կազմակերպության կաղմից կատարված աշխատանքների վերահսկամն պահանջը շահագործողի կողմից պետք է նկարագրված լինի կողմերի միջև կնքված պայամանգրում: Ավելի մանրամասն փոխանցման գործընթացին ծանոթանալու համարխորհուրդ է տրվում ուսումնասիրել ՓԱՐՏ-Մ-ի, Հավելված II կետ M.A.201 (h)(1)-ի համար:

3 Սերտիֆիկացման գործընթաց

3.1Հայտի ներկայացում

Շահագործողը Թռիչքային պիտանության պահպանման կազմակերպության (ԹՊՊԿ) սերտիֆիկացման համար ՔԱԳՎ է ներկայացնում հայտ (Հավելված 13.1 կամ Հավելված 13.10՝ ՓԱՐՏ-Մ, ենթամաս Ֆ-ի դեպքում) ինչպես նաև պաշտոնակատարների կողմից լրացված ձևաթղթերը (Հավելված13.2):

Առաջին անգամ սերտիֆիկացվելիս հայտատուն հաստատման համար պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերի փաթեթը.

1. Թռիչքային պիտանիությունպահպանման ձեռնարկ (ԹՊՊՁ);

2. ՏԾ յուրաքնչյուր օդանավի համար;
3. Տեխսպասարկման պայմանագիր ՓԱՐՏ-145 կազմակերպության հետ (անհրաժեշտություն դեպքում)

Վերոհիշյալ փաստաթղթերը կարող են ներկայացվել սևագիր տարբերակով, քանի որ ուսումնասիրությունների արդյունքում կարող են առաջանալ դրանցում փոփոխություններ կատարելու անհարժեշտություն: Ցանկացած դեպքում մինչև բոլոր փաստաթղթերը չհամաձայնեցվեն և չհաստատվեն, կազմակերպության սերտիֆիկացման կամ փոփոխությունների գործընթացը դրական ավարտ չի կարող ունենալ:

3.2 <u>Փաստաթղթերի ուսումնասիրություն</u>

Հայտատուի ներկայացված տեղեկատվությունը ԹՊՎ-ի կողմից օգտագործվում է կազմակերպության թռիչքային պիտանիության և տեխսպասարկման համակարգի վերլուծության համար: Մինչև հայտի տալը շահագործողի կաղմից ձեռնարկված պետք է լինեն բոլոր միջոցառումները օդանավի գծային և պարբերական սպասարկումը ապահովելու համար: Հայտատուն պետք է ներկայացնի տեխսպասարկումը իրականացնող կազմակերպությունների մասին սպառիչ տեղեկատվություն:

<u>3.2.1 ԹՊՊՁ ուսումնասիրություն</u>

ԹՊՊՁ-ն ենթակա է ուսումանսիրության և հաստատման Գլխավոր վարչության կողմից ԹՊՊԿ առաջնային սերտիֆիկացման կամ փոփոխություններ մտցնելիս: ԹՊՊՁ կամ նրա փոփոխությունները Գլխավոր վարչություն պետք է ներկայացվեն թղթային տարբերակով:

ԹՊՊՁ ուսումնասիրության ժամանակ ուշադրություն է դարձվում նրա ձևաչափի և բովանդակության համապատասխանությանը ներկայացվող պահանջներին (Հավելված 13.9, Հավելված V կետ AMC M.A.704-ի համար):

ԹՊՊՁ-ի ուսումնասիրությունից հետո հայտատուն տեղեկացվում է թերությունների առկայության մասին, անհրաժեշտությաուն դեպքում նշվում են նաև դրանց վերացման ժամկետները:

ԹՊՊՁ-ի հետագա լրացումները և փոփոխությունները ուժի մեջ մտնելու համար, նրանք նույնպես պետք է ուսումնասիրվեն և հաստատվեն Գլխավոր վարչության կողմից:

Սակայն, ԹՊՊԿ թույլատրվում է ԹՊՊՁ-ում կատարել աննշան փոփոխություններ և լրացումներ, որոնք ունեն խմբագրական բնույթ և չեն փոխում ձեռնարկի բովանդակությունը՝ ՓԱՐՏ-Մ-ին համապատասխանության առումով: Տվյալ գործընթացի կիրառման համար այն պետք է նկարագրված լինի ձեռնարկում և հավանության արժանացած Գլխավոր վարչության կողմից: Այդպիսի փոփոխությունների կամ լրացումների մասին Գլխավոր վարչությունը պետք է տեղեկացվի հնարավորինս կարճ ժամկետում: Տեղեկությունը ստանալուց հետո Գլխավոր վարչությունը գրավոր տեղեկացնում է ընկերությանը ստացման վերաբերյալ:

ՔԱԳՎ ԹՊ վարչությունը հաշվառում են կազմակերպությունների ԹՊՊՁ-ների հրատարակությունները և նրանցում արված փոփոխությունները:

<u>3.2.2 ՏԾ ուսումնասիրություն</u>

ԹՊՊԿ-ը վերահսկման տակ գտնվող յուրաքանչյուր օդանավի համար պարտավոր է.

1. Մշակել և վերահսկել ՏԾ կատարումը ներառյալ հուսալիության ծրագիրը (եթե կիրառելի է);
2. Մշակել ՏԾ-ի հետագա փոփոխություններ և լրացումներ;
3. Ապահովել օդանավի տեխսպասարկումը համաձայն ՏԾ-ի:

ՏԾ-ը, ինչպես նաև նրա հետագա լրացումները և փոփոխությունները պետք է ներկայացվեն ՔԱԳՎ ուսումնասիրությունների և հաստատման համար: ԹՊՊԿ պետք է պարբերաբար վերանայի ՏԾ-ը նրա համապատասխանությունը ձեռք բերված փորձի, ՔԱԳՎ և Տիպի սերտիֆիկատ կրողի նոր առաջադրված պահանջներին ապահովելու հաար: ՏԾ-ը պետք է վերանայվի առնվազն տարի մեկ անգամ: Տարեկան պարբերական վերանայման ժամանակ պետք է հաշվի առնվեն նաև ՏԾ-ի կազմման համար բազային փաստաթղթերի նոր փոփոխությունները:

Գործող Փարտ-21-ի պարտադիր պահանջները, պարբերական ստուգումները, մոդիֆիկացիաների և վերանորոգումների արդյունքում պահանջվող աշխատանքները պետք է ներառվեն ՏԾ:

ՏԾ կազմելիս հիմնվում են Տեխսպասարկման Խորհրդի Վերլուծությունների Հաշվետվության (MRBR), կամ Տեխսպասարկման Պլանավորման Փաստաթղթի (MPD), կամ Տեխսպասարկման Ռեգլամենտի (PTO) վրա, ինչպես նաև իր մեջ պետք է ներառի բաղադրամասերի սպասարկման պլանավորման և ՔԱԳՎ լրացուցիչ պահանջները:

Որոշ ՏԾ-ներ որոնք մշակված են համաձայն MPD-ի կարող են պարունակել նաև Հուսալիության ծրագիր, որը կհանդիսանա ՏԾ–ի անբաժան մասը:

ՏԾ-ի մշակման ժամանակ անհրաժեշտ է համոզվել, որ այն համապատասխանում է տվյալ օդանավի թռիչքային պիտանիության պահպանման պահանջներին և շահագործման պայմաններին (շահագործման տարածաշրջան, բազավորման վայր, կլիմայական պայմաններ, պլանավորվող և փաստացի թռիչքաժամեր և այլն):

ՔԱԳՎ-ն կարող է հաստատել անավարտ ՏԾ մինչև օդանավի շահագործումը սկսելը կամ նոր շահագործողի համար պայմանով, որ ժամանկավոր ՏԾ-ի գործողության ժակետը չի գերազանցի անավարտ ՏԾ-ում չներառված աշխատանքների կատարման ժամկետները:

ՏԾ-ում թերությունների առկայության դեպքում ընկերությունը գրավոր տեղեկացվում է դրանց մասին: Թերությունների բացակայության դեպքում ՏԾ-ը հաստատվում է ԹՊՎ պետի կողմից, որի մասին ընկերությունը գրավոր տեղեկացվում է: ՏԾ-ի մեկ օրինակը պահվում է ՔԱԳՎ Թռիչքային պիտանիության վարչությունում:

Եթե ԹՊ վարչությունը գտնում է, որ տվյալ ՏԾ-ով օդանավի անվտանգ շահագործումը ապահովված չէ, ապա ՏԾ-ի կամ նրա բաղկացուցիչ մասի գործողությունը կարող է դադարեցվել կամ կասեցվել:

Այդպիսի դեպքեր օրինակներ են.

1. Օդանավի շահագործման ինտենսիվության փոփոխություն:
2. ԹՊՊԿ-ը այլևս չի ապահովվում ՏԾ-ով նախատեսված աշխատանքների ծավալի համապատասխանությունը օդանավի անվտանգ շահագործման պահանջներին:

<u>3.2.2.1 Հուսալիության ծրագիր</u>

Մեծ օդանավերի համար (>5700կգ), երբ Տեխսպասարկման Պլանավորման Փաստաթղթը (MPD) կազմված է MSG-3 տրամաբանությամբ, կամ, երբ կարևոր բաղադրամասերի համար չկան վերանորոգման հստակ ժամկետներ, ՏԾ-ն իր մեջ պետք է ներառի նաև Հուսալիության ծրագիր:

Հուսալիության ծրագրի նպատակն է ՏԾ-ում ներառված աշխատանքների, նրանց կատարման պարբերականության էֆեկտիվության որոշումը: Հուսալիության ծրագրի կիրառմամբ կարելի է փոփոխել պլանավորվաղ աշխատանքների կատարման պարբերականությունները:

3.3 Կազմակերպության ստուգում

Փաստաթղթերի ուսումնասիրություններից հետո, նրանցում թերությունների բացակայության պայմանով, ԹՊ վարչությունը իրականացնում է ԹՊՊԿ-ն անմիջական տեսչական ստուգում, ներկայացվող պահանջներին նրա համապատասխանությունը գնահատելու նպատակով:

ԹՊՎ պետը նշանակում է տեսուչի կամ տեսչական խումբ ստուգումը իրականացնելու համար:

Տեսչական ստուգումը սկսվում է կազմակերպության պատասխանատու ղեկավարի հետ հանդիպմամբ՝ թռիչքային պիտանիության պահպանման կազմակերպության կարևորության նրա պատկերացումը գնահատելու նպատակով: Հանդիպման վերաբերյալ կազմվում է արձանագրություն (Հավելված 15.11), որը ստորագրվում է մասնակիցների կողմից և կցվում է ընկերության սերտիֆիկացման փաթեթին:

ԹՊՎ տեսչական ստուգման ընթացքում տեսուչներին պետք է ուղեկցի ընկերության ավագ տեխնիկական պատասխանատու պաշտոնյան: Դա անհրաժեշտ է որպեսզի ընկերության ղեկավարությունը տեղեկացված լինի տեսչական ստուգման ժամանակ արձանագրված բոլոր թերությունների մասին: ԹՊՊԿ պետք է ապահովվի աշխատողների համար համապատասխան պայմաններ (տարածք, կապ, սարքավորումներ, ջերմաստիճան, լուսավորություն և այլն), որոնք հնարավորություն կտան անձնակազմին լիարժեք կատարել իրենց պարտականությունները:

Կազմակերպությունը պետք է ապահովի տեխնիկական գրադարանի և փաստաթղթերի ուսումնասիրությունների համար սենյակի առկայությունը:

Ստուգումը իրականացնելիս տեսուչը պետք է ղեկավարվի ԹՊՎ ձեռնարկով, ԹՊՊՁ-ով, ԵԱՍԱ կանոնակարգով և ուղեցույց նյութերով:

Տեսչական ստուգման ավարտից հետո ՔԱԳՎ ԹՊ վարչությունը կատարում է արձանագրված թերությունների վերլուծություն, թերությունների մակարդակները որոշելու նպատակով:

Հայտատուն տեղեկացվում է արձանագրված թերությունների վերաբերյալ ստուգման ավարտից հետո երկու շաբաթվա ընթացքում: Թերությունների վերացման մասին գրություն ստանալուց հետո, հայտատուն գրավոր տեղեկացվում է կատարված աշխատանքների ընդունելիության վերաբերյալ (բավարար են, թե ոչ):

ՆՇՈՒՄ. ԹՊՊԿ-նը առաջին անգամ սերտիֆիկացվելիս բոլոր արձանագրված թերությունները պետք է վերացնի միչև սերտիֆիկատ ստանալը:

3.4 <u>Սերտիֆիկատի ստացում</u>

Տեսչական ստուգումների բավարար արդյունքների դեպքում ԹՊ վարչությունը շնորհում է սերտիֆիկատ ԹՊՊԿ-յանը (Հավելված 13.4): Սերտիֆիկատը ունի նաև հավելված, որում նշվում են թույլատրված աշխատանքների ծավալները:

Սերտիֆիկատը կարող է տրվել հետևյալ գործողության ժակետներով.

1. Սահմանփակ ժամկետով, կապված Օդանավ շահագործողի սերտիֆիկատի գործողության ժամկետի հետ:
2. Անսահմանփակ ժամկետով հետևյալ դեպքերում.
   – Օդանավ շահագործողի սերտիֆիկատը անժամկետ է;
   – ԹՊՊԿ համապատասխանում է ՓԱՐՏ-Մ-ի պահանջներին, հաշվի առնելով 3.3 և 4.2 կետերի՝ թերությունների վերացումների հետ կապված պայմանը;

- Ապահովում է ԹՊՎ աշխատակիցների մուտքը կազմկերպության տարածք, ընդունված պահանջներին համապատասխանությունը որոշելու նպատակով;
- Սերտիֆիկատի գործողությունը կասեցված կամ դադարեցված չէ:

4 Փոփոխություններ ԹՊՊ կազմակերպությունում

ՔԱԳՎ-ն պետք է տեղեկացված լինի ԹՊՊԿ-ում պլնավորվող ցանկացած փոփոխության մասին, որի իր հերթին կապահովի կազմակերպության համապատասխանությունը ընդունված պահանջներին: Փոփոխությունները ՔԱԳՎ-ին չհայտնելու փաստը կբերի ԹՊՊԿ սերտիֆիկատի հետ կանչման:

ՔԱԳՎ-ն նախօրոք պետք է տեղեկացված լինի հետևյալ պլանավորվող փոփոխությունների վերաբերյալ, ուսումնասիրելու և հաստատելու նպատակով.

1. Կազմակերպության անվանումը;
2. Կազմակերպության գտնվելու վայրը;
3. Կազմակերպության ստորաբաժանումների գտնվելու վայրերը;
4. Պատասխանատու ղեկավար;
5. Ցանկացած ղեկավար պաշտոնյա համաձայն M.A.606(b) կետի;
6. Արտադրական տարածքներ, գործընթացներ, թույլատրվող աշխատանքներ և անձնակազմ, որոնց փոփոխությունը կարող է անդրադառնալ Սերտիֆիկատի գործողության վրա:

Վերոնշված փոփոխոիթյունները ԹՊՊՁ-ի լրացումներ կամ փոփոխություններ են պահանջում՝ ՔԱԳՎ-ի համապատասխան ուսումնասիրության և հաստատումից հետո: Գլխավոր վարչությունը իր հերթին կարող է առաջադրել լրացուցիչ պայմաններ և սահմանփակումներ փոփոխությունների գործողության ժամանկահատվածով:

Եթե կազմակերպությանը նախօրոք հայտնի չեն անձնակազմի մասով փոփոխությունների մանրամասնությունները, ապա պարզելուց հետո Գլխավոր վարչությունը տեղեկացվում է հնարավորինս սեղմ ժամկետում:

ԹՊՊԿ-ը պետք է վարի ԹՊՊՁ-ում արված փոփոխությունների հաշվառման ցուցակ:

5. Սերտիֆիկատի սահմանափակում, կասեցում և դադարեցում

ՔԱԳՎ ԹՊ վարչությունը նախաձեռնում է հետևյալը.

1. Կասեցնում է ԹՊՊԿ սերտիֆիկատը վտանգավոր անհամապատասխանությունների առկայության փաստագրման դեպքում, կամ
2. Սահմանափակում, կասեցնում կամ դադարեցնում է սերտիֆիկատը 6.2 մասում նկարագրված դեպքերում:

Կասեցման կամ դադարեցման դեպքում սետիֆիկատը ենթակա է վերադարձման ԹՊ վարչություն: Այն ԹՊՎ վերադարձվում է նաև ժամկետի ավարտից հետո:

6. Թռիչքային պիտանիության պահպանման վերահսկում

6.1 Ստուգումների իրականացում

ՔԱԳՎ իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում գարանցված օդանավերի թռիչքային պիտանիության պահպանման վերահսկումը և ոչ մի պայմանով այդ իրավասությունը չի փոխանցում օդանավերի սեփականատերերին, շահագործողներին, ԹՊՊԿ-ներին կամ տեխսպասարկման կազմակերպություններին:

Թռիչքային պիտանիության վարչությունը ՔԱԳՎ ստորաբաժանումն է, որը իարվասու է իրականացնել վերոհիշյալ վերահսկման գործառույթը:

Այդ նպատակով ԹՊՎ մշակում է ԹՊՊԿ-ների և նրաց կողմից վերահսկվող օդանավերի տեսչական ստուգուներ իրականացնելու ժամանակացույց, որպեսզի համուզվի, որ պահպանվում են ԹՊՎ ձեռնարկի և սույն ուղեցույցի 1-ին կետի բոլոր պահանջները: Ժամանակցույցում նշվում են նախորդ և պլանավորվող ստուգումների օրերը:

ԹՊՊ յուրաքանչյուր կազմակերպություն անցնում է ամբողջական ստուգում հետևյալ նշված ժամանկահատվածներում.

1. Եթե ԹՊՊԿ-յան սերտիֆիկատի գործողության ժամկետը 24 ամիս է, ապա ստուգումը իրականցվում է սերտիֆիկատի գործողության ժամկետի ընթացքում:

2. Եթե ԹՊՊԿ-յան սերտիֆիկատի գործողության ժամկետը 24 ամիս է կամ ավելի, կամ տրված է անսահմանափակ ժամկետով, ապա ամբողջական ստուգումները արվում են 24 ամիսը չգերազանցող ժակետում:

ՀՀ գրանցված օդանավերը տեսչական ստուգումներ են անցնում ստուգումների ժամանկացույցի համաձայն, որը չպետք է գերեզանցի 24 ամիսը: Ստուգումների արդյունքների մասին շահագործողը տեղեկացվում է գրավոր: ԹՊՎ-ն հաշվառում է բոլոր թերությունները, ինչպես նաև նրանց վերացման նպատակով արված աշխատանքները:

Կազմակերպությունում արձանագրված թերությունների մասին պատասխանատու ղեկավարի տեղեկացվածությունը որոշելու համար, 24 ամիսը չգերազանցող ժամկետում, կազմակերպվում է հանդիպում նրա հետ և կազմվում համապատասխան արձանագրություն:

Տեսչական ստուգումները կարող են արվել նաև փուլային տարբերակով, որոնք միասին կազմում են ամբողջական ստուգում: Այդ դեպքում յուրաքանչյուր փուլի ստուգման ծրագրում նշվում են ստուգման կետերը:

Այն դեպքում երբ շահագործողը որոշ թռիչքային պիտանիության պահպանման գործառույթներ իրականցնում է պայմանագրային հիմունքներով, ապա պայմագրային կազմակերպությունները նույպես ենթակա են ՔԱԳՎ կողմից ստուգուների 24 ամիսում առնվազն մեկ անգամ հաճախականությամբ:

ԹՊՎ տեսչական ստուգման ընթացքում տեսուչին պետք է ուղեկցի շահագործողի ավագ տեխնիկական պատասխանատու պաշտոնյան: Պայմանագրայաին կազմակերպության ստուգման ժամանակ արձանագրված թերությունների մասին տեղեկացվում է շահագործող ընկերությունը, որն էլ պատասխանատու է թերությունների վերացման համար:

<u>6.2 Միջոցառումներ կախված թերությունների մակարդակից</u>

Թերությունները, որոնք արձանագրվել են ԹՊՊԿ սերտիֆիկացման կամ պլանավորված ստուգման ժամանակ, պետք է դասակարգվեն:

Կախված թերությունների լրջությունից նրանք բաժանվում են երկու մակարդակի.

1. I-ին մակարդակի թերություն-ցանկացած լուրջ անհամապատասխանություն ՓԱՐՏ-Մ-ի պահանջներին, որը ազդում է թռիչքների անվտանգության վրա;
2. II-րդ մակարդակի թերություն-ցանկացած լուրջ անհամապատասխանություն ՓԱՐՏ-Մ-ի պահանջներին, որը թռիչքների անվտանգության վրա կարող է ունենալ լուրջ ազդեցություն:

Թռիչքային պիտանիության պահպանկման գործընթացի վրա ազդող թերությունների հայտնաբերման դեպքում ԹՊ վարչությունը նախաձեռնում է հետևյալը.

1. I-ին մակարդակի թերության դեպքում ԹՊՊԿ սերտիֆիկատի մասնակի կամ ամբողջական անհապաղ կասեցում, սահմանափակում կամ դադարեցում կախված թերության բնույթից, մինչև որ չձեռնարկվեն համապատասխան միջացառումներ թերության և նրա պատճառած հետևանքների վերացման համար:
2. II-րդ մակարդակի թերության դեպքում ԹՊ վարչությունը, կախված թերության բնույթից, նշանակում է ժամկետ դրա վերացման համար, որը չպետք է գերազանցի 3 ամիսը: ԹՊՎ կարող է այդ ժամկետը երկարաձգել շահագործողի մոտ թերության վերացման ընդունելի գործողությունների նախագիծ լինելու դեպքում:

ԹՊՊԿ-ը հայտնաբերված թերությունների վերաբերյալ տեղեկացվելուց հետո, մշակում է նրանց վերացուների գործողությունների նախագիծ և վերցնելուց հետո ՔԱԳՎ ներկայացնում վերացումները հավաստող փաստաթղթերը:

Եթե շահագործողը տրված ժամկետում թերությունները չի վերացնում, ապա նրա ԹՊՊԿ և ՕՇ վկայականները կասեցվում կամ դադարեցվում են:

6.3 Օդանավերի թռիչքային պիտանիության ստուգում

ՀՀ պետռեգիստրում գրանցված օդանավերի թռիչքային պիտանիության ստուգումները իրականացվում են կիսամյակային ստուգուների պլանի համաձայն, ինչպես նաև օդանավի թռիչքային պիտանիության սերտիֆիկատի ժակետի երկարացման կամ առաջնային տրման ժամանակ: Ստուգուների պլանը կազմելիս հաշվի է առնվում ռեգիստրում գրանցված օդանավերի քանակը, նախորդ ստուգուների արդյունքները: Ստուգումների նպատական է օդանավերի տեխնիկական վիճակի որոշումը, շահագործողի կողմից նրանց պատշաճ վերահսկման և պահպանման գնահատումը: Ստուգուների նպատակն է նաև որշել շարունակու՝մ են թռիչքային պիտանիության համար պատասխանատու պաշտոնյաները և կազակերպությունները համապատասխանել սերտիֆիկացման պայմաններին, թե ոչ:

Թերությունների արձանագրման դեպքում արվում է դրանց պատճառների վերլուծություն: Շահագործողը գրավոր տեղեկացվում է դրանց մասին: Անհրաժեշտության դեպքում Գլխավոր վարչությունը կարող է նշանակել ժամկետներ դրանց վերացման համար:

Եթե թերությաունների վերլուծությունը պարզում է անհամապատասխանություն ՓԱՐՏ-Մ-ի պահանջների հետ, ապա կիրառվում են 4.2 կետում նշված միջոցները:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր

Հավելված **13.1**

Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն *General Department of Civil Aviation at the Government of the Republic of Armenia*	ՓԱՐՏ-Մ-Ի ԵՆԹԱՄԱՍ Ջ-Ի ՎԱՎԵՐԱՑՈՒՄ *Part-M Subpart G APPROVAL*	ՀԱՅՏ՝ **Application for** սկզբնական շնորհման [ ] *initial grant* փոփոխման [ ] *change*

1.	Հայտատուի գրանցված անվանումը: *Registered name of applicant:*			
2.	Առևտրային անվանումը (առկայության դեպքում) *Trading name (if different):*			
3.	Վավերացման ենթակա հասցեները: *Addresses requiring approval:*			
4.	Հեռ. *Tel.*	Ֆաքս. *Fax.*	Էլ. փոստ. *E-mail.*	
5.	Ենթամաս-Ջ-ի վավերացման տիրույթը համաձայն սույն հայտի: *Scope of Subpart-G Approval relevant to this application.*			
6.	Հաշվետու կառավարիչի (ներկայացված*) պաշտոնը և անուն ազգանունը: *Position and name of the (proposed *) Accountable Manager.*			
7.	Հաշվետու կառավարիչի ստորագրությունը (ներկայացված*): *Signature of the (proposed *) Accountable Manager.*			
8.	Հասցե: *Place.*			
9.	Թվականը: *Date.*			
	Ծանոթություն 1. Ձև(եր)ը ներկայացվում է (են) *Note 1: The Form(s) should be sent to*	Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն *General Department of Civil Aviation at the Government of the Republic of Armenia*		
	Ծանոթություն 2. Տեղեկատվություն վճարումների վերաբերյալ *Note 2: Information on any fees payable*			

* Կիրառելի է միայն ՓԱՐՏ-ի նոր հայտատուի համար
Applicable only in the case of new PART Applicant

(Form Two Page 1 of 1)

Հավելված 13.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

GENERAL DEPARTMENT OF CIVIL AVIATION AT THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

Համաձայն ՓԱՐՏ-..... հաստատման ենթակա ղեկավար անձնակազմի տվյալներ
Details of Management Personnel required to be accepted as specified in various PART-.....

1. **Անուն, Ազգանուն՝**
Name:

2. **Պաշտոնը:**
Position:

3. **Որակավորումը՝ համապատասխան (2) կետում նշված զբաղեցրած պաշտոնին:**
Qualifications relevant to the item (2) position:

4. **Աշխատանքային փորձը՝ (2) կետում նշված պաշտոնում:**
Work experience relevant to the item (2) position:

Ստորագրությունը՝ ..... **Թվականը՝** .....
Signature: *Date:*

Լրացված այս ձևը կոնֆիդենցիալ միջոցով ուղարկել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն
On completion, please send this form under confidential cover to the General Department of Civil Aviation of the Republic of Armenia.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության լիազորված անձի անունը և ստորագրությունը՝
Name and signature of authorised GDCA Republic of Armenia staff member accepting this person:

Ստորագրությունը՝..... **Թվականը՝**.....
Signature: *Date:*

Անուն, Ազգանունը՝ ..... **Պաշտոնը՝** .....
Name: *Office:*

(EASA Form Four)

Հավելված 13.**3**

Մ.Ա. G Ենթամասի Վավերացման զեկույց *M.A. SUBPART G APPROVAL RECOMMENDATION REPORT*		**ԵԱԱԳ ՁԼ 13** *EASA FORM 13*	
ՄԱՍ 1. Ընդհանուր դրույթներ *PART 1: General*			
Կազմակերպության անվանումը՝ *Name of Organisation:*			
Վավերացման հղումը՝ *Approval Reference:*			
Պահանջվող վավերացման կարգը/ԵԱԱԳ Ձև 14-ի կամ Օդանավ շահագործողի վկայականի ամսաթիվը*՝ *Requested Approval Rating/* *EASA Form 14 or AOC dated*:*			
Ունեցած այլ վավերացումներ (եթե առկա են) *Other approvals held (If app.)*			
Հաշվեքննված միջոց(ներ)ի հասցեն՝ *Address of Facility(ies) Audited:*			
Հաշվեքննման ժամանակահատվածը *Audit period:*		……. **-ից մինչև** ……. *From* *to*	
Հաշվեքննման թվական(ներ)ը *Date(s) of Audit:*			
Հաշվեքննման հղում(ներ)ը *Audit reference(s):*			
Հարցազրույցին մասնակցած անձնակազմը *Persons interviewed:*			
ՀՀ ՔԱԳՎ, ԹՊՎ տեսուչներ *GDCA RA, AWD surveyor:*	_ _____ _ _____ _____ _____	**Ստորագրություն(ներ)ը** *Signature(s):*	_____ _____ _____ _____
ՀՀ ՔԱԳՎ, ԹՊՎ *GDCA RA, AWD, Office:*	……	**13 ձևի 1-ին մասի լրացման թվականը** *Date of Form 13 part 1 completion:*	

* delete where applicable

ՄԱՍ 2. Մ.Ա. G Ենթամասի համապատասխանության հաշվեքննություն
PART 2: M.A. Subpart G Compliance Audit Review

Հինգ սյունակները կարող են նշվել և կիրառվել ինչպես հարկն է թռիչքային պիտանիության պահպանման մասին եզրակացություն տալու համար: Ներքոհիշյալ Մ.Ա. ենթամաս G-ի ենթապարագրաֆներում օգտագործված յուրաքանչյուր սյունյակի բառակուսին անհրաժեշտ է նշել (√), եթե համապատասխանությունը բավարարված է, կամ (X) դնել, եթե չի բավարարում և քառակուսիից հետո մատնանշել հղումը Մաս 4-ի թերություններում, կամ մուտքագրել N/A, եթե չի կիրառվում կամ N/R, եթե ընդունելի է, բայց չի զննվել:

The five columns may be labelled & used as necessary to record the approval product line or facility, including subcontractor's, reviewed. Against each column used of the following M.A. Subpart G sub-paragraphs please either tick (√) the box if satisfied with compliance or cross (X) the box if not satisfied with compliance and specify the reference of the Part 4 finding next to the box or enter N/A where an item is not applicable, or N/R when applicable but not reviewed.

Պարագրաֆ/ Para	Առարկան /Subject					
Մ.Ա.703 M.A.703	**Վավերացման ընդգրկույթը** Extent of approval	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.704 M.A.704	**Թռիչքային պիտանիության պահպանման ձեռնարկ(Տես Մաս3)** Continuing Airworthiness Management Exposition (See Part 3)	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.705 M.A.705	**Աշխատանքնային պայմանները** Facilities	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.706 M.A.706	**Անձնակազմին ներկայացվող պահանջներ** Personnel requirements	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.707 M.A.707	**Թռիչքային պիտանիության վերահսկման անձնակազմ** Airworthiness review Staff	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.708 M.A.708	**Թռիչքային պիտանիության պահպանման կառավարում** Continuing airworthiness management	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.201 M.A.201	**Պարտականությունները** Responsibilities	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.202 M.A.202	**Իրադարձությունների զեկուցում** Occurrence Reporting	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.302 M.A.302	**Օդանավի Տեխսպասարկման ծրագիրը** Aircraft Maintenance programme	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.303 M.A.303	**Թռիչքային պիտանիության դիրեկտիվներ** Airworthiness directives	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.304 M.A.304	**Տվյալներ ձևափոխումների և նորոգումների համար** Data for modifications and repairs	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.305 M.A.305	**Օդանավի թռիչքային պիտանիության պահպանման համակարգի գրառումներ** Aircraft continuing airworthiness record system	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.306 M.A.306	**Շահագործողի Տեխնիկական մատյանի համակարգ** Operator's Technical log system	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.307 M.A.307	**Օդանավի թռիչքային պիտանիության պահպանման գրառումների փոխանցում** Transfer of aircraft continuing airworthiness records	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.709 M.A.709	**Փաստաթղթերը** Documentation	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.710 M.A.710	**ԹՊ վերանայում** Airworthiness review	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.711 M.A.711	**Կազմակերպության իրավունքները** Privileges of the organisation	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.712 M.A.712	**Որակի համակարգը** Quality system	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.713 M.A.713	**Հաստատված թռիչքային պիտանիության պահպանման կազմակերպության փոփոխությունները** Changes to the approved continuing airworthiness organisation	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.714 M.A.714	**Գրառումների պահպանումը** Record keeping	☐	☐	☐	☐	☐
Մ.Ա.716 M.A.716	**Անհամապատասխանություններ** Findings	☐	☐	☐	☐	☐

ՀՀ ՔԱԳՎ ԹՊՎ տեսուչներ GDCA RA, AWD inspector(s):	_____ _____ _____ _____	**Ստորագրություն (ներ)ը:** Signature(s):	_____ _____ _____ _____

Մ.Ա. G Ենթամասի Վավերացման առաջարկի հաղորդագրություն *M.A. SUBPART G APPROVAL RECOMMENDATION REPORT*		**ԵԱԱԳ Չև 13** *EASA FORM 13*
ՄԱՍ 3 Համապատասխանությունը Մ.Ա. Ենթամաս G-ի թռիչքային պիտանիության պահպանման կառավարման ձեռնարկին (ԹՊԿՁ)/ **PART 3: Compliance with M.A. Subpart G continuing airworthiness management exposition (CAME)** Քառակուսին նշել (V), եթե համապատասխանությունը բավարարված է, կամ, եթե չի բավարարում (X) և մատնանշել հղումը Մաս 4-ի թերություններում, կամ մուտքագրել N/A, եթե չի կիրառվում, կամ N/R, որտեղ ընդունելի է, բայց չի զննվել: Please either tick the box if satisfied with compliance; or if not satisfied with compliance X and specify the reference of the Part 4 finding, or enter N/A where an item is not applicable, or N/R when applicable but not reviewed.		
Մաս 0 / Part 0		**Ընդհանուր կազմակերպումը** / General organisation
0.1		**Պատասխանատու կառավարչի ընդհանուր պարտավորությունները**/ Corporate commitment by the accountable manager.
0.2		**Ընդհանուր տեղեկատվություն**/ General information.
0.3		**Ղեկավար անձնակազմը**/ Management personnel
0.4		**Կազմակերպության կառավարման սխեման**/ Management Organisation Chart
0.5		**ԼՄ տեղեկացման ընթացակարգերը կազմակերպության գործունեության / վավերացման / տեղաբաշխման/անձնակազմի փոփոխությունների դեպքերում**/ Notification procedure to the competent authority regarding changes to the organisation's activities/approval/location/personnel.
0.6		**Ձեռնարկի լրացումների ընթացակարգերը** / Exposition amendment procedures.
Մաս 1 Part 1		**Թռիչքային պիտանիության պահպանման կառավարման ընթացակարգեր**/ Continuing airworthiness management procedures
1.1		**Օդանավի տեխնիկական մատյանի օգտագործումը և ՆՍՑ կիրառումը (առևտրային օդային փոխադրամիջոց)**: Aircraft technical log utilization and MEL application (commercial air transport).
1.2		**Օդանավի տեխսպասարկման ծրագրեր – լրացումների մշակում և հաստատում** / Aircraft maintenance programmes – development amendment and approval.
1.3		**Ժամերի և ԹՊՊ գրառումները, պարտավորությունները, պահպանումը, մատչելիությունը** / Time and continuing airworthiness records, responsibilities, retention, access.
1.4		**ԹՊԴ կատարումը և հսկումը** / Accomplishment and control of airworthiness directives.
1.5		**Տեխսպասարկման ծրագր(եր)ի արդյունավետության վերլուծություն**/ Analysis of the effectiveness of the maintenance programme(s).
1.6		**Ոչպարտադիր ձևափոխման իրականացման քաղաքականությունը**/ Non mandatory modification embodiment policy.
1.7		**Զգալի ձևափոխման ստանդարտները**/ Major modification standards.
1.8		**Արատների հաղորդումը** / Defect reports.
1.9		**Ճարտարագիտական գործունեություն**/ Engineering activity.
1.10		**Հուսալիության ծրագրեր**/Reliability programmes.
1.11		**Նախաթռիչքային տեսչություն**/Pre-flight inspections.
1.12		**Օդանավի կշռում**/Aircraft weighing.
1.13		**Ստուգողական թռիչքի ընթացակարգեր**/Check flight procedures.
Մաս 2 / Part 2		**Որակի համակարգ** / Quality system
2.1		**ԹՊՊ որակի քաղաքականությունը, պլանը և հաշվեքննությունների ընթացակարգը** / Continuing airworthiness quality policy, plan and audits procedure.
2.2		**ԹՊՊ կառավարման գործունեության մոնիտորինգ** / Monitoring of continuing airworthiness management activities.
2.3		**ՏՍ ծրագր(եր)ի օգտակարության մոնիտորինգ** / Monitoring of the effectiveness of the maintenance programme(s).
2.4		**Ստուգել, որ ողջ տեխսպասարկումը իրականացվել է համապատասխան ՏՍ կազմակերպության կողմից/** Monitoring that all maintenance is carried out by an appropriate maintenance organisation
2.5		**Ստուգել, որ ամբողջ պայմանագրված ՏՍ իրականացված է համաձայն պայմանագրի՝ ներառյալ ՏՍ կապալառուների կողմից օգտագործված ենթակապալառուները /** Monitoring that all contracted maintenance is carried out in accordance with the contract, including sub-contractors used by the maintenance contractor.
2.6		**Որակի հաշվեքննության անձնակազմ**/Quality audit personnel.

Մ.Ա. G Ենթամասի Վավերացման առաջարկի հաղորդագրություն		**ԵԱԱԳ Չև 13**
M.A. SUBPART G APPROVAL RECOMMENDATION REPORT		*EASA FORM 13*
ՄԱՍ 3 Համապատասխանությունը Մ.Ա. Ենթամաս G-ի թռիչքային պիտանիության պահպանման կառավարման ձեռնարկին (ԹՊԿՁ)/ PART 3: Compliance with M.A. Subpart G continuing airworthiness management exposition (CAME)		
Մաս 3/Part 3		Պայմանագրված տեխսպասարկում/Contracted Maintenance
3.1		**Տխսպասարկման կապալառուի ընտրման ընթացակարգը/** Maintenance contractor selection procedure.
3.2		**Տեխսպասարկման կապալառուների մանրամասնված ցանկ/** Detailed list of maintenance contractors
3.3		**Օդանավի որակի հաշվեքննություն**/Quality audit of aircraft.
Մաս 4/Part 4		Թռիչքային պիտանիության վերահսկման ընթացակարգեր/Airworthiness review procedures
4.1		**Թռիչքային պիտանիության վերահսկման անձնակազմ**/Airworthiness review staff.
4.2		**Օդանավի գրառումների վերանայում**/Review of aircraft records.
4.3		**Ֆիզիկական վերահսկում** /Physical survey.
4.4		**Լրացուցիչ ընթացակարգեր լիազորված մարմիններին ներկայացվող առաջարկությունների համար օդանավի ներմուծման առնչությամբ /** Additional procedures for recommendations to competent authorities for the import of aircraft.
4.5		**Առաջարկություններ ԼՄ ԹՊ վերանայման վկայականի տրամադրման համար** Recommendations to competent authorities for the issue of airworthiness review
4.6		**ԹՊ վերանայման վկայականի տրամադրում** Issuance of airworthiness review certificates
4.7		**ԹՊ վերանայման գրառումները, պարտավորությունները, պահպանումը, մատչելիությունը** / Airworthiness review records, responsibilities, retention and access.
Մաս 4Բ/Part 4B		
4B.1		**Համապատասխանությունը հաստատված թռիչքային պայմաններին** Conformity with approved flight conditions
4B.2		**Թռիչքի թույլտվության վավերացում թռիչքային պիտանիության պահպանման կազմակերպության հաստատման ներքո** Issue of permit to fly under the CAMO privilege
4B.3		**Թռիչքի թույլտվությունը ստորագրող լիազորված անձիք** Permit to fly authorized signatories
4B.4		**Տեղական իշխանությունների հետ կապը թռիչքի նպատակով** Interface with the local authority for the flight
4B.5		**Թռիչքի թույլտվության վերաբերյալ գրառումները, պատասխանատվությունը, պահպանումը և օգտվելու իրավունքը** Permit to fly records, responsibilities, retention and access
Մաս 5/Part 5		Հավելվածներ/Appendices
5.1		**Փաստաթղթերի օրինակները** Sample documents
5.2		**Թռիչքային պիտանիության վերանայման անձնակազմի ցուցակ** List of airworthiness review staff
5.3		**Ենթակապալառուների ցանկը ըստ Մ.Ա. 711(ա) 3 և ՀԸԻ Մ.Ա.201(h) 1** List of sub-contractors as per M.A.711 (a) 3 and AMC M.A.201 (h) 1.
5.4		**Հաստատված կապալառու տեխսպասարկման կազմակերպությունների ցանկը** List of approved maintenance organisations contracted.
5.5		**Ենթապայմանագրված աշխատանքների պայմանագրերի պատճենները (ՀԸԻ Մ.Ա.201(h) 1, հավելված 1)** Copy of contracts for sub-contracted work (appendix 2 to AMC M.A.201 (h) 1).
5.6		**Հաստատված տեխսպասարկման կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի պատճենները** Copy of contracts with approved maintenance organisations.
ԹՊԿՁ հղում՝ CAME reference:		**ԹՊԿՁ լրացում՝** CAME amendment:
ՔԱԳՎ տեսուչ(ներ)՝ GDCA audit staf:		**Ստորագրություն(ներ)՝** Signature(s):
ՔԱԳՎ գրասենյակ՝ GDCA office:		**13 Չևի 3-րդ մասի լրացման թվականը՝** Date of Form 13 part 3 completion:

Մ.Ա. G Ենթամասի Վավերացման առաջարկի հաղորդագրություն *M.A. SUBPART G APPROVAL RECOMMENDATION REPORT*					**ԵԱԱԳ Չև 13** *EASA FORM 13*
Մաս 4: Թերություններ Մ.Ա. Ժ ենթամասի համապատասխանության առնչությամբ Part 4: Findings regarding M.A. Subpart G compliance status **Յուրաքանչյուր 1 և 2 մակարդակի թերություն պետք է գրանցվի արդյոք վերացվել է թե՝ ոչ և պետք է նույնականացվի տարրական խաչաձև հղումով Մաս 2-ի պահանջներին: Բոլոր չվերացված թերությունները պետք է պատճենահանվեն ու գրավոր ներկայացվեն կազմակերպությանը անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար:** Each level 1 and 2 finding should be recorded whether it has been rectified or not and should be identified by a simple cross reference to the Part 2 requirement. All non-rectified findings should be copied in writing to the organisation for the necessary corrective action.					
Մաս **2 կամ 3 հղում** Part 2 or 3 ref.	**Հաշվեքննության հղում(ներ)ը** Audit reference(s): **Թերությունները** Findings	L U e ա v կ e ա l p ղ ա կ	**Շտկման գործողություններ** Corrective action		
			Վերջնաժամկետ Date due	**Վերացման թվականը** Date closed	**Հղում** Reference

Մ.Ա. G Ենթամասի Վավերացման առաջարկի հաղորդագրություն *M.A. SUBPART G APPROVAL RECOMMENDATION REPORT*		**ԵԱԱԳ Չև 13** *EASA FORM 13*	
Մաս 5: Մ.Ա.G ենթամասի Վավերացման, կամ ընթացիկ վավերացման, կամ փոփոխման հանձնարարական Part 5: M.A. Subpart G approval or continued approval or change recommendation			
Կազմակերպության անվանումը Name of Organisation:	……. …….		
Վավերացման հղումը Approval Reference:	…….		
Հաշվեքննության հղում(ներ)ը: Audit reference(s)	…….		
Սույն կազմակերպությանը առաջարկվում է հետևյալ Մ.Ա. G Ենթամասի վավերացման ոլորտը The following M.A. Subpart G scope of approval is recommended for this organization			
Կամ առաջարկվում է, որպեսզի ԵԱԱԳ 14-րդ Չևում նշված վավերացման ոլորտը՝ հղված ……. շարունակվի Or, it is recommended that the M.A. Subpart G scope of approval specified in EASA Form 14 referenced ……. ……. be continued			
ՀՀ ՔԱԳՎ ԹՊՎ տեսուչի անունը Name of recommending GDCA RA AWD Surveyor:	……. ……..		
ՀՀ ՔԱԳՎ ԹՊՎ տեսուչի ստորագրությունը Signature of recommending GDCA RA AWD Surveyor:	……..		
ՀՀ ՔԱԳՎ ԹՊՎ գրասենյակ GDCA RA AWD office:	……		
Հանձնարարականի թվականը: Date of Recommendation:	……		
Չև 13-ի վերաքննություն (մասնագիտական ստուգում Form 13 review (quality check):	……..	**Թվական** Date:	……..

Հավելված **13.4**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA

ԹՌԻՉՔԱՅԻՆ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ
CONTINUING AIRWORTHINESS MANAGEMENT ORGANIZATION APPROVAL CERTIFICATE

Հղում
Reference: **AM.MG.XXXX** **(ref. AM-AOC-XXX)**

Համաձայն Հայաստանի Հանրապետության "Ավիացիայի մասին" օրենքի և Հանձնաժողովի (ԵՀ) թիվ 2042/2003 կանոնակարգի՝ քանի դեռ այն գործում է ստորև նշված պայմանների համաձայն, Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը սույնով վավերացնում է՝
Pursuant to the Law on Aviation of the Republic of Armenia and to Commission Regulation (EC) No 2042/2003 for the time being in force and subject to the conditions specified below, the General Department of Civil Aviation at the Government of the Republic of Armenia hereby certifies:

Թռիչքային պիտանիության պահպանման կառավարման կազմակերպության անվանումը և հասցեն
Continuing airworthiness management organisation's name and address

որպես թռիչքային պիտանիության պահպանման կառավարման կազմակերպություն՝ թիվ 2042/2003 կանոնակարգի Հավելված 1 (ՓԱՐՏ-Մ), Ա բաժնի Ժ ենթամասին համապատասխան թույլատրված է, որպեսզի կառավարի կից ներկայացվող հաստատված ցանկում թվարկված օդանավերի թռիչքային պիտանիության պահպանումը և՝ երբ համաձայնեցված է տա առաջարկներ և թռիչքային պիտանիության վերազննման սերտիֆիկատներ՝ Հավելված 1 (ՓԱՐՏ-Մ) կանոնակարգի Մ.Ա.710 կետում որոշված կարգով կատարված վերազննումից հետո, և՝ երբ համաձայնեցված է տա թռիչքի թույլտվություններ՝ համաձայն նույն կանոնակարգի Հավելված 1 (ՓԱՐՏ-Մ) Մ.Ա.711 (c) կետի:
as a continuing airworthiness management organisation in compliance with Section A, Subpart G of Annex 1 (Part-M) of Regulation (EC) No 2042/2003, approved to manage the continuing airworthiness of the aircraft listed in the attached schedule of approval and, when stipulated, to issue recommendations and airworthiness review certificates after an airworthiness review as specified in point M.A.710 of Annex 1 (Part-M), and, when stipulated , to issue permits to fly as specified in point M.A.711 (c) of Annex 1 (Part-M), of same regulation:

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ/CONDITIONS:

1. Սույն վավերացումը սահմանափակված է հաստատված թռիչքային պիտանիության պահպանման կառավարման կազմակերպության ձեռնարկի թույլտվությունների բաժնում նշված չափով՝ ըստ թիվ 2042/2003 կանոնակարգի Հավելված 1 (ՓԱՐՏ-Մ), Ժ ենթամասի, Ա բաժնի.
This approval is limited to that specified in the scope of the approval section of the approved continuing airworthiness management exposition as referred to in Section A, Subpart G of Annex 1 (Part-M) of Regulation (EC) No 2042/2003.
2. Սույն վավերացումը պահանջում է համապատասխանություն ըստ թիվ 2042/2003 կանոնակարգի Հավելված 1 (ՓԱՐՏ-Մ) վավերացված թռիչքային պիտանիության պահպանման կառավարման ձեռնարկին.
This approval requires compliance with the procedures specified in the Annex 1 (Part-M) to Regulation (EC) No 2042/2003 approved continuing airworthiness management exposition.
3. Սույն վավերացումը ուժի մեջ է քանի դեռ վավերացված թռիչքային պիտանիության պահպանման կառավարման կազմակերպությունը համապատասխանում է թիվ 2042/2003 կանոնակարգի Հավելված 1 (ՓԱՐՏ-Մ) պահանջներին:
This approval is valid whilst the approved continuing airworthiness management organisation remains in compliance with Annex 1 (Part-M) to Regulation (EC) No 2042/2003.
4. Երբ թռիչքային պիտանիության պահպանման կազմակերպությունը՝ իր որակի համակարգի ներքո պայմանագրային հիմունքներով օգտվում է կազմակերպության/ների ծառայությունից, սույն վավերացումը մնում է ուժի մեջ այդպիսի կազմակերպության/ների կողմից պայմանագրով ստանձնած համապատասխան պարտավորությունների կատարման դեպքում:
Where the continuing airworthiness management organisation contracts under its Quality System the service of an/several organisation(s), this approval remains valid subject to such organisation(s) fulfilling applicable contractual obligations
5. Վերը նշված 1-ից մինչև 4 կետերի պայմաններին համապատասխանելու դեպքում սույն սերտիֆիկատը ուժի մեջ է մինչև սահմանված թվականը, եթե այն նախօրոք չի կասեցվել, փոխարինվել, դադարացվել կամ ճանաչվել է ուժը կորցրած: Եթե սույն վավերացումը կիրառվում է Օդանավ շահագործողի վկայական կրողի համար, ապա Օդանավ շահագործողի վկայականի համարը պետք է ավելացվի հղման մեջ՝ ի լրումն ստանդարտ համարին, և թիվ 5 պայմանը պետք է փոխարինել հետևյալ լրացուցիչ պայմաններով:
Subject to compliance with the conditions 1 to 4 above, this approval shall remain valid until the specified date unless the approval has previously been surrendered, superseded, suspended or revoked. If this form is also used for AOC holders, the AOC number shall be added to the reference, in addition to the standard number, and the condition 5 shall be replaced by the following extra conditions.
6. Սույն վավերացումը չի հանդիսանում պարբերություն 1-ում նշված օդանավերի տիպերի շահագործման թույլտվություն: Օդանավերի շահագործման թույլտվություն է հանդիսանում Օդանավ շահագործողի վկայականը:
This approval does not constitute an authorisation to operate the types of aircraft referred in paragraph 1. The authorisation to operate the aircraft is the Air Operator Certificate (AOC).
7. Օդանավ շահագործողի վկայականի գործողության դադարեցումը, կասեցումը կամ հետ կանչումը ինքնաբերաբար բերում է սույն վավերացման կասեցմանը՝ Օդանավ շահագործողի վկայականում նշված օդանավերի մասով, եթե այլ կերպ հատուկ սահմանված չէ համապատասխան իշխանությունների կողմից:
Termination, suspension or revocation of the AOC automatically invalidates the present approval in relation to the aircraft registrations specified in the AOC, unless otherwise explicitly stated by the competent authority.
8. Վերոհիշյալ պայմաններին համապատասխանելու դեպքում սույն վավերացումը ուժի մեջ է մինչև սահմանված թվականը, եթե այն նախօրոք չի կասեցվել, փոխարինվել, դադարացվել կամ ճանաչվել ուժը կորցրած:
Subject to compliance with the previous conditions, this approval shall remain valid until the specified date unless the approval has previously been surrendered, superseded, suspended or revoked.

Տրման ամսաթիվը
Date of original issue:

ՀՀ ՔԱԳՎ Թռիչքային Պիտանիության վարչության պետ
Director of Airworthiness Department of GDCA RA

Ուժի մեջ է մինչև
Date of expiry:

Ստորագրություն/Signature:

Կ.Տ./SEAL

Page 1 of 2

ԹՌԻՉՔԱՅԻՆ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ
CONTINUING AIRWORTHINESS MANAGEMENT ORGANISATION'S APPROVAL SCHEDULE

Հղում AM.MG.XXXX/XX
Reference: (AM-AOC-XXX)

Կազմակերպություն
Organisation:

Օդանավի տեսակը/սերիայի/խմբի Aircraft type/series/group	Թույլատրված է ԹՊ Վերանայում Airworthiness review authorised	Տրված է Թռիչքի թույլտվության իրավունք Permits to fly authorised	Որակի համակարգի հսկողության ներքո Աշխատող կազմակերպություն (ներ) Organisation(s) working under the quality system

Սույն ցանկը սահմանափակված է հաստատված Թռիչքային պիտանիության պահպանման կառավարման ձեռնարկում ընդգրկված թույլատրված գործառույթներով:
This approval schedule is limited to that specified in the scope of approval contained in the approved Continuing Airworthiness Management Exposition section.

Հիմք՝ Թռիչքային Պիտանիության Պահպանման Կառավարման Կազմակերպության Ձեռնարկ՝ (և ավելի ուշ հաստատված վերանայումները)
Continuing Airworthiness Management Exposition Reference (and later approved revision)

Վերջին վերանայման ամսաթիվը
Date of last revision:

Վերանայում թիվ
Revision No:

Տրման ամսաթիվը
Date of original issue:

ՀՀ ԿԱ ՔԱԳՎ Թռիչքային Պիտանիության վարչության պետ
Director of Airworthiness Department of GDCA RA

Կ.Տ./SEAL

Ուժի մեջ է մինչև
Date of expiry:

_____
Ստորագրություն/Signature

Page 2 of 2

Հավելված **13.7**

Կազմակերպության սերտիֆիկացման բլոկ-սխեման



Հավելված **13.9**

Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն *General Department of Civil Aviation at the Government of the Republic of Armenia*	ՓԱՐՏ-Մ-Ի ԵՆԹԱՄԱՍ Ֆ-Ի ՎԱՎԵՐԱՑՈՒՄ *Part-M Subpart F APPROVAL*	ՀԱՅՏ՝ **Application for** սկզբնական շնորհման [ ] *initial grant* փոփոխման [ ] *change*

1.	Հայտատուի գրանցված անվանումը: *Registered name of applicant:*		
2.	Առևտրային անվանումը (առկայության դեպքում) *Trading name (if different):*		
3.	Վավերացման ենթակա հասցեները: *Addresses requiring approval:*		
4.	Հեռ. *Tel.*	Ֆաքս. *Fax.*	Տելեքս. *Telex.* .....
5.	ՓԱՐՏ-145-ի վավերացման տիրույթը համաձայն սույն հայտի (տես 2-րդ էջը հնարավորությունների համար): *Scope of PART-145 Approval relevant to this application (see the page 2 for possibilities).*		
6.	Հաշվետու կառավարիչի (ներկայացված *) պաշտոնը և անուն ազգանունը: *Position and name of the (proposed *) Accountable Manager.*		
7.	Հաշվետու կառավարիչի ստորագրությունը (ներկայացված *): *Signature of the (proposed *) Accountable Manager.*		
8.	Հասցե: *Place.*	ՀՀ, Երևան	
9.	Թվականը: *Date.*		
	Ծանոթություն 1. Ձև(եր)ը ներկայացվում է (են) *Note 1: The Form(s) should be sent to*	Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն *General Department of Civil Aviation at the Government of the Republic of Armenia*	
	Ծանոթություն 2. Տեղեկատվություն վճարումների վերաբերյալ *Note 2: Information on any fees payable*	-	

* Կիրառելի է միայն ՓԱՐՏ-145-ի նոր հայտատուի համար
Applicable only in the case of new PART-145 Applicant

(EASA Form Two Page 1 of 2)

Ենթամաս Ֆ-Ի ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈԼՈՐՏԸ
SCOPE OF Subpart-F APPROVAL AVAILIABLE

ԴԱՍԸ *CLASS*	ԿԱՐԳԸ *RATING*		ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ *LIMITATION*	ԲԱԶԱՅԻՆ *BASE*	ԳԾԱՅԻՆ *LINE*
ՕԴԱՆԱՎ *AIRCRAFT*	A1	Ինքնաթիռներ/Օդանավ 5700 կգ-ից ավելի *Aeroplanes/airships above 5700 kg*			
	A2	Օդանավ 5700 կգ և պակաս *Aeroplanes/airships 5700 kg and below*			
	A3	Ուղղաթիռ *Helicopters*			
ՇԱՐԺԻՉՆԵՐ *ENGINES*	B1	Տուրբինային *Turbine*			
	B2	Մխոցային *Piston*			
	B3	Օժանդակ շարժիչ *APU*			
Բաղադրամասեր բացի համալրված շարժիչներից կամ օժանդակ շարժիչներից *Components other then complete Engines or APU*	C1	Օդափոխում և ճնշում *Air Cond&Press*			
	C2	Ինքնաթռիչք *Auto Flight*			
	C3	Հաղորդակցում և նավիգացիա *Comms and Nav*			
	C4	Դռներ-մուտքեր *Door-Hatches*			
	C5	Էլեկտրասնություն *Electrical Power*			
	C6	Սարքեր *Equipment*			
	C7	Շարժիչ-Օժանդակ շարժիչ *Engine-APU*			
	C8	Թռիչքի կառավարում *Flight Controls*			
	C9	Ավիավառելիք-օդանավի ընդհանուր կառուցվածք *Fuel-Airframe*			
	C10	Ուղղաթիռ-ռոտոր *Helicopter-Rotors*			
	C11	Ուղղաթիռ *Helicopter-Trans*			
	C12	Հիդրոհամակարգ *Hydraulic*			
	C13	Գործիքներ *Instruments*			
	C14	Շասսի *Landing Gear*			
	C15	Թթվածին *Oxygen*			
	C16	Պտուտակներ *Propeller*			
	C17	Պնևմոհամակարգ *Pneumatic*			
	C18	Պաշտպանություն սառույցից/անձրևից/կրակից *Protection ice/rain/fire*			
	C19	Պատուհաններ *Windows*			
	C20	Կառուցվածք *Structure*			
Մասնագիտացված ծառայություններ *Specialised Services*	D1	Չքայքայող ղննում *Non Destructive Inspection*			

Լրացման օրինակ/ *Example style*

A1	*Base & Line Boeing 737-200*	B2	*Lycoming Piston*
A2	*Base Piper PA34*	B3	*Garrett GTSP85*
A2	*Base & Line Cessna Piston Twins*	C2	*SFENA*
A3	*Bell 206/212*	C4	*Boeing 747*
B1	*CFM56*	D1	*Eddy Current*

(EASA Form Two Page 2 of 2)